«Սպիտակի Հելսինկյան խումբ»
Իրավապաշտպան հասարակական կազմակերպություն

Հաշվետու զեկույց

«Իրավական աջակցություն աղետի հետևանքով անօթևան մնացած ընտանիքներին» ծրագրի

Սպիտակ 2011թ.

«Սպիտակի Հելսինկյան խումբ» իրավապաշտպան ՀԿ

«Իրավական աջակցություն աղետի հետևանքով անօթևան մնացած ընտանիքներին» ծրագրի հաշվետու զեկույց

Ա.Դ.Սախարովի անվան ՄԻՊ հայկական կենտրոն

& Kerk in Actie

Evangelischer Entwicklungsdienst

Զեկույցը տպագրվել է Ա.Դ. Սախարովի անվան մարդու իրավունքների պաշտպանության հայկական կենտրոնի «Քաղաքացիական հասարակության նախաձեռնություններ» ծրագրի շրջանակներում, ICCO և EED կազմակերպությունների ֆինանսական աջակցությամբ. ենթադրամաշնորհ ICCO և EED/SG 2011, Gyumri-005

«Իրավական աջակցություն աղետի հետևանքով անօթևան մնացած ընտանիքներին» ծրագրի հաշվետու զեկույց

Զեկույցում ներկայացված է «Սպիտակի Հելսինկյան խումբ» իրավապաշտպան ՀԿ-ի կողմից հունիս-օգոստոս ամիսների ընթացքում Սպիտակ քաղաքի և հարակից Լեռնանցք, Արևաշող, Ջրաշեն, Սարամեջ գյուղական համայնքների թվով 54 ընտանիքների բանավոր խորհրդատվություն և իրավական աջակցություն տրամադրելու մասին:

Զեկույցը պատրաստել են

Ծրագրի ղեկավար՝ Աշխեն Բաբայան
Ծրագրի իրավաբան՝ Արթուր Հարությունյան
Ծրագրի համակարգող՝ Աստղիկ Էհտիբարյան
Սրբագրիչ՝ Լուսինե Գրիգորյան

Երախտիքի խոսք

Ծրագիրն իրականացնելու համար «Սպիտակի Հելսինկյան խումբ» իրավապաշտպան ՀԿ-ն շնորհակալություն է հայտնում Ա.Դ. Սախարովի անվան մարդու իրավունքներիր պաշտպանության հայկական կենտրոնի Գյումրու մասնաճյուղին՝ ֆինանսավորման և «Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» ՀԿ-ին աջակցության համար:

Բովանդակություն

Ներածություն ……. 6

Գլուխ 1

Աղետի գոտու վերականգնման հարաբերությունները կարգավորող օրենսդրության վերլուծություն: Իրավակիրառ պրակտիկա …… 7

Գլուխ 2

Բնակարանային շինարարության ծրագրի հերթացուցակում չընդգրկելու մասին որոշումների ուսումնասիրություն: Ընտրված գործեր …… 16

Գլուխ 3

Բանավոր խորհրդատվություն: Իրավական աջակցություն: Գործերի նկարագրություն …… 22

Գլուխ 4

Եզրակացություն …… . 27

Հավելվածներ …… 28

Ներածություն

2010թ. հոկտեմբերի 5-ին Սպիտակ քաղաքում տեղի ունեցավ ՀՀ աղետի գոտու բնակավայրերում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային խնդիրների լուծման նպատակով պետական աջակցությամբ իրականացվող բնակարանային շինարարության ծրագրերի շրջանակներում կառուցված բնակելի տների (բնակարանների) հատկացման հարցերով հանձնաժողովի (այսուհետ նաև Հանձնաժողով) արտագնա նիստը: Նիստի ընթացքում Հանձնաժողովի կողմից կազմվեց թիվ 20 արձանագրությունը, որով որոշում կայացվեց թվով 79 ընտանիքների չընդգրկել 2010թ. պետական ծրագրի շրջանակներում կառուցված բնակելի տուն ստանալու իրավունք ունեցող անձանց հերթացուցակում:

Այս որոշման կայացումից հետո հերթացուցակում չընդգրկված քաղաքացիների մի մասը դիմեց մեր կազմակերպություն՝ աջակցության խնդրանքով:

Կազմակերպությունը, քաղաքացիների գործերն ուսումնասիրելուց հետո պարզեց, որ այդ քաղաքացիների բողոքները տեղին են և նրանցից շատերը բնակարան ստանալու իրավունք ունեն:

2011թ. Կազմակերպությունը նախաձեռնեց քաղաքացիների շահերի պաշտպանության գործընթացը՝ «Իրավական աջակցություն աղետի հետևանքով անօթևան մնացած ընտանիքներին» ծրագրի շրջանակներում: Որի ֆինանսավորումը ստանձնեց Ա.Դ. Սախարովի անվան մարդու իրավունքների պաշտպանության հայկական կենտրոնը՝ <<Քաղաքացիական հասարակության նախաձեռնություններ>> ծրագրի շրջանակներում՝ ICCO և EED կազմակերպությունների ֆինանսական աջակցությամբ:

Սույն ծրագրի նպատակն էր աջակցել օրենքի խախտմամբ հերթացուցակից դուրս մնացած ընտանիքների իրավունքների վերականգնմանը:

Ծրագրի խնդիրներն էին՝

1. Ուսումնասիրել հանձնաժողովի կողմից <<Սպիտակ քաղաքի և հարակից գյուղական համայնքների բնակարան ստանալու իրավունք ունեցող ընտանիքներին հերթացուցակում չընդգրկելու մասին>> ընդունված որոշումները
2. Բացահայտել օրենքի խախտմամբ ընդունված որոշումները
3. Աջակցել հերթացուցակից դուրս մնացած ընտանիքների իրավունքների վերականգնմանը:

Ծրագրի ավարտին ակնկալվում էր առնվազն 20 ընտանիքի աջակցել իր բնակարանային իրավունքների վերականգնման գործում:

Գլուխ 1

Աղետի գոտու վերականգնման հարաբերությունները կարգավորող օրենսդրության վերլուծություն: Իրավակիրառ պրակտիկա:

Այս բաժնում ներկայացվում է աղետի գոտու վերականգնման պետական ծրագրի շրջանակներում բնակարան ստանալու իրավունք ունեցող քաղաքացիների հաշվառման և բնակարան հատկացնելու հետ կապված հարաբերությունները կարգավորող ներպետական օրենսդրության վերլուծությունը, և թե ինչպես են կիրառվում դրանք գործնականում:

1.1 Աղետի գոտու վերականգնման պետական համալիր ծրագրի.

2001 թվականի օգոստոսի 30-ին ՀՀ Ազգային ժողովը ընդունեց <<Աղետի գոտու վերականգնման համալիր ծրագիրը հաստատելու մասին>> ՀՀ օրենքը:

Աղետի գոտու վերականգնման համալիր ծրագիրը (այսուհետ նաև համալիր ծրագիր) մշակվել է ՀՀ քաղաքաշինության նախարարության, Շիրակի և Լոռու մարզպետարանների կողմից:

Որպես համալիր ծրագրի նպատակ սահմանվեց աղետի գոտու վերականգնման պետական քաղաքականության հիմնական սկզբունքների ձևավորում՝ երկրաշարժի հետևանքով տուժած բնակավայրերում բնակության համար բարենպաստ պայմաններ ստեղծելու նպատակով: Իսկ ծրագրի արդյունքում նախատեսվում է բարելավել երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային պայմանները, վերականգնել համալիր սպասարկման ենթակառուցվածքները:

Համալիր ծրագրի 5.1 կետով սահմանվեց բնակարանային ոլորտի վերականգնման սկզբունքները:

Մասնավորապես սահմանվեց, որ անօթևան մնացած քաղաքացիների բնակարանային խնդիրների լուծման համար համալիր ծրագրով նախատեսվում է պետական պարտավորությունների ձևավորման և աջակցության տրամադրման հետևյալ սկզբունքները՝

- ապահովել բնակարաններով երկրաշարժի հետևանքով քանդված կամ քանդման ենթակա բազմաբնակարան տների սահմանված կարգով հերթագրված քաղաքացիներին:
- աջակցել բնակարանային պայմանների բարելավման հարցում:

<u>1.2. Հարաբերությունները կարգավորող օրենսդրություն և իրավակիրառ պրակտիկա</u>

Ներպետական օրենսդրության նորմատիվ ակտերի ցանկ, որոնց մասին խոսվելու է սույն զեկույցում..

1. ՀՀ Սահմանադրություն.
2. <<Աղետի գոտու վերականգնման մասին>> ՀՀ օրենք
3. <<Աղետի գոտու վերականգնման համալիր ծրագիրը հաստատելու մասին>> ՀՀ օրենք
4. Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումներ

- ՀՀ Կառավարության 10.06.1999թ. թիվ 432 որոշում և դրա մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ կառավարության որոշումներ
- ՀՀ կառավարության 13.11.2008թ. թիվ 1337-Ն որոշում և դրա մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ կառավարության որոշումներ:

1. ***ՀՀ Սահմանադրության 34-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր և իր ընտանիքի համար բավարար կենսամակարդակի, այդ թվում՝ բնակարանի, ինչպես նաև կենսապայմանների բարելավման իրավունք: Պետությունն անհրաժեշտ միջոցներ է ձեռնարկում քաղաքացիների այս իրավունքի իրականացման համար:***

Սահմանադրության վերը հիշատակված նորմը <<Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ>> /Գ. Հարությունյանի, Ա. Վաղարշյանի ընդհանուր խմբագրությամբ, Երևան. <<Իրավունք>> 2010./ մեկնաբանված է.
/.../ Բնակարանի իրավունքը մարդու հնարավորությունն է ունենալ բնակարան /սեփականության կամ վարձակալության իրավունքով/, բնակարան ձեռք բերելու գործում /քաղաքացիների համար/ ***ստանալ օժանդակություն պետությունից****, օրինակ՝* ***խիստ կարիքավոր խմբի քաղաքացիներին, աղետի գոտու բնակիչներին****՝ նպատակային ծրագրերի, հիպոթեկային վարկավորման միջոցով: Սահմանադրության 34-րդ հոդվածում ամրագրված իրավունքները երաշխավորված են նույն հոդվածում ամրագրված պետության պարտականությամբ, որին համապատասխան պետությունը անհրաժեշտ միջոցներ պետք է ձեռնարկի քաղաքացիների այս իրավունքի իրականացման համար:*
/.../Մարդու բնակարանի սահմանադրական իրավունքը նշանակում է յուրաքանչյուրի օրենսդրորեն երաշխավորված հնարավորություն՝ ապահովվելու մշտական բնակարանով: Բավարար դրամական միջոցներ ունեցող անձիք, այդ թվում՝ քաղաքացի չհանդիսացող, կարող են սահմանված կարգով իրենց հաշվին ձեռք բերել կամ վարձակալել բնակարան, ***իսկ անապահով քաղաքացիներին կամ որոշակի կատեգորիայի անձանց /բնական կամ տեխնածին աղետներից տուժածներ, զոհված ազատամարտիկի ընտանիքի անդամներ և այլն/ կարող է բնակարան տրամադրվել պետական կամ համայնքային միջոցների հաշվին:***

- <<Աղետի գոտու վերականգնման մասին>> ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի համաձայն՝ աղետի գոտի են համարվում Հայաստանի Հանրապետության այն տարածքները, որոնցում տեղաբաշխված բնակելի, արտադրական, սոցիալական, պատմամշակութային, կոմունալ և այլ նշանակության օբյեկտներն ու ենթակառուցվածքները տուժել են 1988 թվականի դեկտեմբերի 7-ի երկրաշարժի հետևանքով:

- ՀՀ կառավարությունը 1999 թվականի հունիսի 10-ի թիվ 432 որոշմամբ սահմանեց աղտի գոտու բնակավայրերում քաղաքացիներին բնակարանների արտահերթ հատկացման կարգը:

- 2008 թվականի նոյեմբրի 13-ին ընդունվեց կառավարության թիվ 1337-Ն որոշումը, որով սահմանվեց աղետի գոտու գյուղական բնակավայրերում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների հաշվառման, բնակարանային ապահովության առաջնահերթության կարգը:

- Երկրորդ որոշման ընդունմամբ, փաստորեն, տարանջատվեց գյուղական և քաղաքային համայնքներում աղետի գոտու վերականգնման ծրագրի շրջանակներում քաղաքացիներին բնակարաններ հատկացնելու կարգերը:

ՀՀ Կառավարության 10.06.1999թ. թիվ 432 և գյուղական համայնքներում բնակարան ստանալու կարգը սահմանող կառավարության 13.11.2008թ. թիվ 1337-Ն որոշումներով սահմնվեց, որ բնակարան արտահերթ ստանալու իրավունք ունեն Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ունեցող այն քաղաքացիները և նրանց ընտանիքի անդամները, որոնց կացարանները (բազմաբնակարան շենքի բնակարանը) երկրաշարժի հետևանքով քանդվել կամ բնակվելու համար դարձել են ոչ պիտանի:

Այդ նույն երկու որոշումներով սահմանվում է, թե արդեն հաշվառված քաղաքացին երբ և ինչ հիմքերով կարող է դուրս մնալ հերթացուցակից, համաձայն որոնց քաղաքացին հանվում է հաշվառումից, եթե՝

- ա) հաշվառման վերցված անձանց բնակարանային պայմանները բարելավվել են, որի կապակցությամբ վերացել են հաշվառման մեջ գտնվելու հիմքերը.
- բ) հաշվառման վերցված անձինք մշտական բնակության են փոխադրվել այլ բնակավայր.
- գ) բնակարանային պայմանների բարելավման կարիք ունենալու մասին ներկայացվել են իրականությանը չհամապատասխանող տեղեկություններ:

Իսկ 1337-Ն որոշմամբ նաև սահմանվեց այն հիմքերը, որոնց առկայության պայմաններում միայն համայնքի ղեկավարը կարող էր մերժել դիմումի ընդունումը.

Մասնավորապես սահմանվեց, որ դիմումների քննության արդյունքներով մերժվում են այն անձինք, ովքեր՝

- ունեն սեփականության իրավունքով բնակելի տարածություն՝ բացառությամբ նախորդ տարիներին պետական միջոցների հաշվին առանց վարկային միջոցների ներգրավմամբ շինարարությունն սկսած անավարտ շինարարության բնակելի տների.
- նախորդ տարիներին իրականացված պետական աջակցության ծրագրերի շրջանակներում օգտվել են բնակարանային պայմանների բարելավման համար իրենց իրավունքից.
- 2004 թվականի հունվարի 1-ից հետո օտարել են բնակարան (բնակելի տուն), որի հետևանքով արհեստականորեն վատթարացրել իրենց բնակարանային պայմանները.
- երկրաշարժից հետո հրաժարվել են բնակարանի (բնակելի տան) ժառանգությունից կամ ժառանգության բացման օրվանից սահմանված ժամկետում դիմում չեն ներկայացրել բնակարանի (բնակելի տան) ժառանգման իրավունքի վկայականն ստանալու համար.
- սեփականության իրավունքով իրենց պատկանող՝ երկրաշարժի հետևանքով քանդված կամ քանդման ենթակա բնակելի տան դիմաց նախկին Հայխնայբանկում բացված իրենց ավանդային հաշիվներին փոխանցված փոխհատուցման միջոցներով կառուցել են բնակելի տուն.
- չեն ներկայացրել սույն կարգի 6-րդ կետի 3-րդ ենթակետի, ինչպես նաև 9.1-ին կետի համաձայն անհրաժեշտ փաստաթղթեր.
- ներկայացրել են իրականությանը չհամապատասխանող տեղեկություններ:

Ըստ էության պետությունը սահմանում է, որ բնակարան կարող են ստանալ այն քաղաքացիները, ովքեր բնակարանով ապահովված չեն կամ չեն եղել:

Բնակարան ստանալու սուբյեկտ հանդիսանալու գլխավոր նախապայմանները հետևյալներն են.

- Անձը պետք է լինի Հայաստանի Հանրապետության քաղաքացի
- Հաշվառված լինի տվյալ համայնքում
- Քաղաքացու բնակարանը երկրաշարժի հետևանքով պետք է քանդված կամ քանդման ենթակա լինի
- Անձը պետք է բնակելի տարածություն չունենա, իսկ 1337-Ն որոշման տրամաբանությամբ նաև 2004թ հունվարի մեկից հետո բնակարան օտարած չլինի:

Նշված կետերի առկայության պայմաններում միայն քաղաքացին կհամարվի բնակարան ստանալու իրավունք ունեցող լիիրավ սուբյեկտ:

Այստեղ հարկ է նշել, որ պետությունը իր վրա պարտավորություն է վերցրել բնակմակերեսով ապահովել նաև բնակարան կորցրած քաղաքացու ընտանիքի անդամներին, որոնց իրավական և փաստական դրությունը պետք է համապատասխանի վերը թվարկված չափանիշներին, հակառակ պայմաններում քաղաքացու ընտանիքի անդամները կզրկվեն բնակարան ստանալու իրենց իրավունքից, ընդ որում պետությունը բնակարան կորցրած քաղաքացու ընտանիքի անդամների բնակարան ստանալու իրավունքը չի պայմանավորում քաղաքացու իրավունքի առկայության հետ, այսինքն հերթացուցակում հաշվառվելուց հետո, եթե ինչ-ինչ պատճառներով և պայմաններով բնակարան կորցրած քաղաքացին զրկվում է բնակարան ստանալու իր իրավունքից, ապա նրա հետ հաշվառված նրա ընտանիքի անդամները պետք է պահպանեն իրենց բնակարան ստանալու իրավունքը: Դա են վկայում ՀՀ կառավարության 10.06.1999թ. թիվ 432 որոշման 1-ին կետով հաստատված կարգի 11-րդ և ՀՀ կառավարության 13.11.2008թ. թիվ 1337-Ն որոշման 16-րդ կետերը, որոնցով մասնավորապես սահմանվում է, որ եթե հաշվառման մեջ գտնվող քաղաքացին մշտական բնակության է մեկնել այլ վայր, մահացել է կամ այլ հիմքերով (1337-Ն որոշման մեջ կոնկրետ սահմանվում է թե այլ հիմք հասկացության տակ ինչ նկատի ունի ՀՀ կառավարությունը) կորցրել է հաշվառման մեջ մնալու իրավունքը, ապա նրա հետ միասին հաշվառման վերցված նրա ընտանիքի անդամների համար պահպանվում է հաշվառման մեջ գտնվելու իրավունքը, եթե չեն վերացել տվյալ ընտանիքը բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցող համարվելու հիմքերը:
Այս երկու կետերը հստակ սահմանում են բնակարան կորցրած քաղաքացիների ընտանիքի անդամների իրավական կարգավիճակը: Սակայն իրավակիրառ պրակտիկան ցույց է տալիս, որ դրանք մեկնաբանվում են ի վնաս ընտանիքի անդամների կամ ընդանրապես չեն կիրառվում, որը թերևս բնակարանային բաշխման գործընթացի ամենաանհասկանալի երևույթն է:
Պետության նման դիրքորոշումը բխում է նախկին ՀՀ բնակարանային օրենսգրքի 53 և 54-րդ հոդվածներից, որոնցով սահմանվում էր վարձակալի ընտանիքի անդամների կարգավիճակը և նրանց տրված էր նույն իրավունքների և պարտականությունների շրջանակը, որոնցով օժտված էր բնակարանի վարձակալը: Այստեղ անհրաժեշտ է նկատել, որ նախկին բնակարանային օրենսգրքի տրամաբանությամբ բնակարանները հատկացվել են ընտանիքին, այլ ոչ թե վարձակալին: Ստացվում է, որ ՀՀ կառավարության որոշումներով ամրագրված <<Քաղաքացի>> հասկացությունը սահմանման կարիք ունի: Իրավակիրառ պրակտիկան ցույց է տալիս, որ քաղաքացի արտահայտության տակ բնակարան բաշխող վարչական մարմինը նկատի է ունենում միայն վարձակալին, սակայն նման մեկնաբանությունը սխալ կլինի, քանի որ վարձակալի ընտանիքի անդամները, լիովին համապատասխանում են <<Քաղաքացի, ով աղետի հետևանքով մնացել է անօթևան>> սահմանմանը: Սա ապացուցման կարիք չունի, քանի որ այն բնակարանները, որոնք աղետի հետևանքով չեն քանդվել, սեփականաշնորհման մասին օրենքի

համապատասխան սեփականաշնորհվում են ընտանիքի անդամների անվամբ, այլ ոչ թե վարձակալի:

05.10.2010թ. թիվ 20 արձանագրությամբ բնակարանների բաշխման հարցերով հանձնաժողովի որոշումներում բազմաթիվ են այն դեպքերը, երբ ընտանիքի մեկ անդամի բնակարան ստանալու հիմքերի վերացման պատճառով Հանձնաժողովը որոշում է բնակարան ստանալու իրավունք ունեցող քաղաքացիների հերթացուցակում չընդգրկել ընտանիքի բոլոր անդամներին, համարելով, որ նրանք ինքըստինքյան զրկվում են բնակարան սատանալու իրենց իրավունքից: Նման դիրքորոշումը որևէ իրավական ակտով չի հիմնավորվում և նույնիսկ տարբեր իրավիճակներում և տարբեր գործերի քննարկման ընթացքում այդ երևույթին տարբեր մեկնաբանություններ և հիմնավորումներ է տրվում:

Օրինակ

1.Մեկ քաղաքացու գործով ներկայացված վարչական բողոքի քննարկման ընթացքում հիմնավորվեց հետևյալ կերպ.

<<Ընտանիքի մյուս անդամները երկրաշարժի պահին եղել են անչափահասներ, հետևաբար նրանք բնակարան ստանալ չեն կարող>> Նման ձևակերպումը իրավական որևէ հիմնավորում չունի:

2.Մեկ այլ գործով պատճառաբանվեց հետևյալ կերպ.

<<ՀՀ կառավարության 10.06.1999թ. թիվ 432 որոշման 1-ին կետով հաստատված կարքի 2-րդ կետում սահմանված է, որ բնակարան արտահերթ ստանալու իրավունք ունեն Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ունեցող այն <u>քաղաքացիները և նրանց ընտանիքի</u> անդամները …. Նշված դրույթը գործնական կիրառության մեջ դիտվում մեկ միասնականության մեջ, այսինքն բնակարան կորցրած քաղաքացիները և նրանց ընտանիքի անդամներն արտահերթ բնակարան կարող են ստանալ միասին, այլ ոչ թե առանձին>>:

Նման մեկնաբանությունը հակասում է աղետի գոտու վերականգնման պետական ծրագրի էությանը:

Նախ խոսքը չի վերաբերում առանձին-առանձին բնակարան ստանալու իրավունքին, այլ զուտ նրան, որ ընտանիքի անդամի բնակարան ստանալու իրավունքը չի կարող վերանալ վարձակալի բնակարանային պայմանների բարելավման հիմքով: Իրավակիրառող մարմնի կողմից տրված նման մեկնաբանությամբ ստացվում է, որ եթե, օրինակ, երկրաշարժի հետևանքով բնակարանի վարձակալը մահացել է, ապա ընտանիքի մյուս անդամները չեն կարող օգտվել բնակարան ստանալու իրենց իրավունքից, սակայն այդ նույն իրավակիրառ պրակտիկան ցույց է տալիս, որ նման ընտանիքները օգտվում են պետական ծրագրից, այսինքն կրկին անգամ իրավակիրառ մարմինը հակասում է ինքն իրեն՝ մի դեպքում պնդելով, որ առանց քաղաքացու նրա ընտանիքի անդամները բնակարան ստանալ չեն կարող, մյուս դեպքում նման ընտանիքներին հատկացնում է բնակարան: Ինչևէ, այս գործերը դեռևս գտնվում է դատաքննության փուլում և դրանց լուծում կարող է տրվել միայն դատարանների կողմից տրված մեկնաբանության արդյունքում:

2. ***ՀՀ կառավարության 26.11.2009թ. թիվ 1402-Ն որոշման հավելվածով սահմանվեց բնակարանների բաշխման գործընթացն ապահովող պետական մարմնի կազմը, գործառույթները և լիազորությունների շրջանակը:***

Որոշմամբ սահմանվեց, որ

- աղետի գոտու բնակավայրերում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային ապահովման նպատակով պետական աջակցությամբ իրականացվող ծրագրերի շրջանակներում կառուցված բնակարանների (բնակելի տների) բաշխման ու հատկացման աշխատանքները կազմակերպում և ղեկավարում է Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարը՝ իր կողմից ստեղծված հանձնաժողովի (այսուհետ՝ հանձնաժողով) և մարզպետի կողմից ստեղծված աջակցող աշխատանքային խմբի միջոցով:
- Հանձնաժողովի կազմում ընդգրկվում են Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարության, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարության, համապատասխան մարզպետարանի և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի ներկայացուցիչներ, Գյումրու, Ստեփանավանի և Սպիտակի քաղաքապետերը (համաձայնությամբ),կամ նրանց կողմից լիազորված անձինք:
- Հանձնաժողովի աշխատանքների թափանցիկությունն ապահովելու նպատակով հանձնաժողովի աշխատանքներին խորհրդատվական ձայնի իրավունքով կարող են մասնակցել հասարակական կազմակերպությունների և զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչները:
- Հանձնաժողովն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, այլ իրավական ակտերով և սույն կանոնակարգով:

Հանձնաժողովի գործառույթներն են հանդիսանում.

- համապատասխան համայնքի ղեկավարի կողմից հաստատված՝ բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցող՝ երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած քաղաքացիների ցուցակում (այսուհետ՝ հերթացուցակ) ընդգրկված անձանց հերթացուցակում ընդգրկվելու չափանիշներին համապատասխանության մասին որոշումը և հերթացուցակում ընդգրկված անձանց հետ հանդիպումները.
- բնակարանային շինարարության ծրագրի շրջանակներում կառուցված բնակարանները (բնակելի տները) ստանալու հավակնող անձանց մշտական բնակության և նրանց սեփականության իրավունքով պատկանող բնակարանի (բնակելի տան) առկայության մասին Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի հետ տեղեկատվությունը ճշտելու նպատակով հարցումների իրականացումը.
- հատկացվող բնակարանի (բնակելի տան) չափի (սենյակների թվով) որոշումը.
- բնակարանային շինարարության ծրագրի շրջանակներում կառուցված բնակարանները (բնակելի տները) ստանալու հավակնող անձանց ցուցակի հաստատման մասին Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարի հրամանի նախագծի նախապատրաստումը.
- հանձնաժողովի կողմից ընդունված որոշումների մասին համապատասխան մարզպետներին և քաղաքացիներին իրազեկելը.

Նաև սահմանվեց, որ հանձնաժողովը բնակարանային շինարարության ծրագրում չընդգրկելու վերաբերյալ որոշումը կարող է ընդունել ՀՀ կառավարության 1999 թվականի հունիսի 10-ի N 432 որոշման 1-ին կետով հաստատված կարգի 12-րդ

կետով և 2008 թվականի նոյեմբերի 13-ի N 1337-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 11-րդ կետով նախատեսված հիմքերով:

Վերոգրյալի մեկնաբանության տրամաբանությամբ ՀՀ կառավարությունը սպառիչ կերպով սահմանել է այն հիմքերը, որոնցից ելնելով հանձնաժողովը կարող է որոշում կայացնել այս կամ այն ընտանիքին զրկել բնակարան ստանալու իրավունքից:

Սակայն պրակտիկան ցույց է տալիս, որ հանձնաժողովը որոշում է կայացնում սահմանված հիմքերից դուրս:

Պատկերավոր լինելու համար բերենք մեկ օրինակ.

05.10.2010թ. թիվ 20 արձանագրությամբ կայացված հանձնաժողովի որոշման մեջ աչքի է ընկնում թիվ 2 հավելվածը., որով 11 ընտանիք, որոնք հաշվառված էին հերթացուցակում ՀՀ կառավարության 10.06.1999թ. թիվ 432 որոշմամբ սահմանված կարգի համաձայն, չընդգրկվեցին հերթացուցակում՝

<u>բնակարանային պայմանները արհեստականորեն վատթարացնելու հիմքով:</u>

Մինչդեռ 432 որոշման 12-րդ կետում նման հիմք սահմանված չէ, նման դրույթ պարունակում է միայն ՀՀ կառավարության 13.11.2008թ. թիվ 1337-Ն որոշման մեջ, որով կարգավորվում է գյուղական համայնքներում բնակարան հատկացնելու կարգը, այն էլ սահմանում է նման կետի կիրառում միայն այն դեպքում, երբ բնակելի տունը օտարվել է 2004թ. հունվարի 1-ից հետո:

Այս դեպքում հանձնաժողովը կիրառել է գյուղական համայնքներում գործող կառավարության որոշման կետը քաղաքային համայնքում՝ Սպիտակ քաղաքում, հաշվառված ընտանիքների նկատմամբ: Բացի այն, որ գյուղական համայնքներում կարգավորող որոշմամբ սահմանված դրույթը քաղաքում կիրառելի չէ, ականատես ենք լինում, որ հանձնաժողովը դա կիրառել է 2004թ. հունվարի 1-ից առաջ բնակելի տուն օտարած քաղաքացու նկատմամբ:

Այստեղ հարկ ենք համարում մեջբերել ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածի 2-րդ մասը, որով ասվում է, որ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով:

Սահմանադրական այս դրույթը արգելում է պետական մարմնին շեղվել օրենքի պահանջներից (օրենք հասկացության տակ անհրաժեշտ է հասկանալ ընդհանրապես նորմատիվ իրավական ակտ):

Մեջբերված օրինակից պարզ երևում է, որ բնակարանների բաշխման հարցերով հանձնաժողովը միայն մեկ արձանագրությամբ կայացված որոշմամբ 11 ընտանիքի զրկել է բնակարան ստանալու իրավունքից այնպիսի հիմքով, որը սահմանված չէ ՀՀ կառավարության 432 որոշման 12-րդ կետով: Սակայն Հանձնաժողովը իր կողմից կայացված որոշման մեջ նշում է, որ ղեկավարվել է ՀՀ կառավարության 10.06.1999թ. թիվ 432 որոշման 1-ին կետով հաստատված կարգի 12-րդ կետով:

3. *Քիչ չեն ՀՀ կառավարության որոշումներում առկա հակասությունների թիվը, որոնք իրենց հերթին իրավակիրառող վարչական մարմնին թույլ են տալիս նույն դրույթը մեկնաբանել տարաբեր կերպ և յուրովի:*

Որպես օրինակ կարելի է նշել ՀՀ կառավարության 13.11.2008թ. թիվ 1337-Ն որոշման 22-րդ կետը, որով սահմանվեց, որ բնակարանային պայմանների բարելավման իրավունք ունեցող քաղաքացիների ցուցակները ենթակա են հաստատման համայնքի ղեկավարի կողմից՝ **մինչև 2008 թվականի դեկտեմբերի 15-ը:**

Նշված կետի տրամաբանությամբ ստացվում է, որ համայնքի ղեկավարը դեկտեմբերի 15-ից **հետո հերթացուցակում որևէ փոփոխություն կատարելու իրավասություն չունի:**

Մինչդեռ ***2009թ. հուլիսի 23-ին*** ՀՀ Կառավարության թիվ 845-Ն և 2009 թվականի նոյեմբերի 26-ի թիվ 1402-Ն որոշումներով կատարվեց մի շարք փոփոխություններ, որոնցով քաղաքացիներին թույլատրվում է նոր փաստաթուղթ ներկայացնել համայնքի ղեկավարին, ինչպիսին է, օրինակ, երկրաշարժի ժամանակ բնակարան ունենալու փաստը հաստատող համայնքի ավագնու որոշումը, սակայն այդ փոփոխություններով համայնքի ղեկավարին նոր որոշում կայացնելու իրավասություն չի վերապահվում: Այստեղ առաջացել **է տրամաբանական սխալ** (հակասություն), քանի որ ստացվում է այնպես, որ ՀՀ կառավարության որոշումներում կատարված փոփոխությունները գործնականում անհնար է կիրառել:

Այս օրինակում առկա խնդրի վերաբերյալ կազմակերպության կողմից դիմում-առաջարկություն է ուղարկվել ՀՀ քաղաքաշինության նախարարին, որով խնդրվել է ՀՀ կառավարության որոշման մեջ փոփոխություն կատարելու առաջարկությամբ դիմել ՀՀ կառավարություն (ուղերձի բովանդակությունն տես հավելված N5-ում):

Պրակտիկայում հանդիպել ենք այնպիսի դեպքի, երբ համայնքի ղեկավարը, ելնելով կառավարության որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին ընդունված որոշումից, 2009թ. կայացրել է որոշում քաղաքացու ընտանիքին հերթացուցակում ընդգրկելու մասին:
Այդ որոշումն ուղարկել է ՀՀ քաղաքաշինության նախարարություն, սակայն հանձնաժողովը որոշումը քննարկման առարկա չի դարձրել՝ պատճառաբանելով, որ ընտանիքը պետք է հաշվառված լիներ մինչև 2008թ. դեկտեմբերի 15-ը: Այս գործով համայնքի ավագանին ընդունել է ուղերձ ուղված ՀՀ վարչապետին, տարածքային կառավարման նախարարին, արդարադատության նախարարին, որով խնդրել է միջամտել և օրենքի սահմաններում լուծել բարձրացված խնդիրը:
Նման պայմաններում անհասկանալի է մնում 2009 թվականին կատարված փոփոխությունների տրամաբանությունը, եթե դրանք գործնականում չեն կարող կիրառվել, ընդ որում փոփոխություններ կատարելու առաջարկությունը արվել է ՀՀ քաղաքաշինության նախարարության կողմից:

Եզրակացություն

- Աղետի գոտու վերականգնման ծրագրի շրջանակներում բնակարան ստանալու հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմատիվ ակտերում առկա են հակասություններ, ինչպես նաև այնպիսի ձևակերպումները, որոնք թույլ են տալիս նույն կետը մեկնաբանել տարբեր կերպ և յուրովի:
- Իրավակիրառ պրակտիկան ցույց է տալիս, որ բնակարանների բաշխման հարցերով հանձնաժողովը բնակարան ստանալու սուբյեկտ է դիտարկում միայն երկրաշարժի հետևանքով քանդված բնակարանի վարձակալ հանդիսացող քաղաքացուն և քաղաքացու բնակարանային պայմանների բարելավման հիմքերի բացակայության դեպքում բնակարան ստանալու իրավունքնից զրկում է նաև նրա ընտանիքի անդամներին, չնայած այն հանգամանքին, որ ՀՀ կառավարության որոշմամբ հստակ սահմանվում է, որ նման դեպքերում ընտանիքի անդամները պետք է պահպանեն իրենց իրավունքները:
- Հանձնաժողովը որոշում է կայացնում այնպիսի հիմքով, որը սահմանված չէ որևէ կիրառելի նորմատիվ ակտով:
- Քիչ չեն այն դեպքերը, երբ հանձնաժողովը ուղղակի կասկածի տակ է վերցնում համայնքի ղեկավարի կողմից կայացված որոշումները կամ գործողությունները՝ համարելով դրանք ոչ իրավաչափ: Նման դեպքում խախտելով հենց տեղական ինքնակառավարման մարմնի իրավունքները, քանի որ որևէ անձ իրավունք չունի կասկածի տակ դնել պետական և (կամ) տեղական ինքնակառավարման մարմնի գործողությունների իրավաչափությունը՝ քանի դեռ այն չի վիճարկվել օրենքով սահմանված կարգով և չի ճանաչվել անվավեր:

Գլուխ 2

Բնակարանային շինարարության ծրագրի հերթացուցակում չընդգրկելու մասին որոշումների ուսումնասիրություն: Ընտրված գործեր:

Այս գլխում ներկայացվում է հանձնաժողովի կողմից կայացված բնակարանային շինարարության ծրագրի շրջանակներում ընտանիքներին բնակարան (բնակելի տուն) ստանալու իրավունք ունեցող քաղաքացիների հերթացուցակում չընդգրկելու մասին որոշումների ուսումնասիրության արդյունքները:
Ուսումնասիրվել են Սպիտակ քաղաքի, Լեռնանցք, Արևաշող, Ջրաշեն, Սարամեջ գյուղական համայնքների մասով 2010թ. հոկտեմբեր ամսից մինչև 2011թ. հունիս ամսվա ընթացքում կայացված որոշումները:
Որոշումները ստանալու նպատակով գրություններ է ուղարկվել ՀՀ քաղաքաշինության նախարարություն (Տես՝ հավելված N1, N2-ում) և համայնքների ղեկավարներին: ՀՀ քաղաքաշինության նախարարության կողմից ստացվել է բոլոր մերժման մասին որոշումների օրինակները: Համայնքի ղեկավարները պատասխանել են, որ նման փաստաթղթերի և ինֆորմացիայի իրենք չեն տիրապետում:
2010 թվականին պետական բյուջեի հաշվին Սպիտակ քաղաքում կառուցված և դեռևս չբաշխված բնակելի տների թվի և կարգավիճակի վերաբերյալ տեղեկություններ ստանալու նպատակով հարցում է ուղարկվել ՀՀ քաղաքաշինության նախարարություն (հարցման և պատասխանի օրինակը տես 3 և 4 հավելվածում):
Որոշումները ուսումնասիրվել են՝ ելնելով ՀՀ կառավարության 10.06.1999թ. թիվ 432 և ՀՀ կառավարության 13.11.2008թ. թիվ 1337-Ն որոշումների պահանջներից՝ հաշվի առնելով կիրառելի այլ նորմատիվ ակտերի պահանջները:

Քաղաք Սպիտակ

2008թ. դեկտմբերի 1-ի դրությամբ Սպիտակ քաղաքում աղետի հետևանքով անօթևան մնացած և բնակարան ստանալու իրավունք ունեցող անձանց հերթացուցակում հաշվառված է եղել թվով 385 ընտանիք:
Հանձնաժողովը Սպիտակ քաղաքի մասով մերժման մասին որոշում է կայացրել 05.10.2010թ. թիվ 20 արձանագրությամբ և 04.05.2011 թ. թիվ 5 արձանագրությամբ:
Որոնցով 88 ընտանիք չի ընդգրկվել <<Վարպետաց>> թաղամասում բնակելի տուն ստանալու իրավունք ունեցող անձանց ցուցակում:



54 — ընտանիքը զրկվել է բնակարան ստանալու իրավունքից՝ բնակարանային պայմանների բարելավման հիմքով. (ՀՀ կառավարության 10.06.1999թ. թիվ 432 որոշման 1-ին կետով հաստատված կարգի 12-րդ կետի ա) ենթակետ.)

11 — ընտանիք բնակարանային պայմանները արհեստականորեն վատթարացնելու հիմքով (նման կետ ՀՀ կառավարության 10.06.1999թ. թիվ 432 որոշման 1-ին կետով հաստատված կարգի 12-րդ կետում գոյություն չունի)

2— ընտանիք բնակարանային պայմանները բարելավման մասին իրականության չհամապատասխանող տեղեկություններ ներկայացնելու հիմքով. (432 որոշման 12-րդ կետ գ) ենթակետ)

6—ընտանիք երկրաշարժի հետևանքով բազմաբնակարան շենքի բնակարան կորցնելու փաստը չհիմնավորելու հիմքով (նման կետ 432 որոշմամբ սահմանված չէ)

2—ընտանիք մշտական բնակավայրից այլ բնակավայր տեղափոխվելու հիմքով (432 որոշման 12-րդ կետի բ) ենթակետ)

13—ընտանիք Սպիտակի քաղաքապետարանի հետ կնքած պայմանագրի համաձայն հաշվառված լինելու կապակցությամբ.

Գյուղ Լեռնանցք

2008 թվականի դեկտեմբերի 15-ի դրությամբ ՀՀ Լոռու մարզի Լեռնանցք համայնքում աղետի հետևանքով անօթևան մնացած և բնակարան ստանալու իրավունք ունեցող անձանց հերթացուցակում հաշվառված է եղել 95 ընտանիք:

Հանձնաժողովը Լեռնանցք համայնքում հաշվառված ընտանիքների մասով ցուցակում մերժման մասին որոշում է կայացրել 2011 թվականի փետրվարի 13-ին ՀՀ Լոռու մարզի Կաթնաջուր համայնքում կայացված արտագնա նիստի թիվ 2 արձանագրությամբ և 2011 թվականի մայիսի 4-ին ՀՀ Լոռու մարզի Ջրաշեն համայնքում կայացված արտագնա նիստի թիվ 5 արձանագրությամբ:

Որոնցով 10 ընտանիք չի ընդգրկվել բնակարան ստանալու իրավունք ունեցող անձանց ցուցակում:



4—ընտանիք երկրաշարժի հետևանքով բնակելի տունը քանդված կամ քանդման ենթակա չլինելու հիմքով

4—ընտանիք սեփականության իրավունքով բնակարան ստանալու կամ նախորդ տարիներին բնակարանային պայմանների բարելավման իրենց իրավունքից օգտվելու հիմքով

1—ընտանիք բնակարանային պայմանները արհեստականորեն վատթարացնելու հիմքով
1—ընտանիք այլ բնակավայր մշտական բնակության տեղափոխվելու հիմքով

Գյուղ Ջրաշեն

2008 թվականի դեկտեմբերի 15-ի դրությամբ ՀՀ Լոռու մարզի Ջրաշեն համայնքում աղետի հետևանքով անօթևան մնացած և բնակարան ստանալու իրավունք ունեցող անձանց հերթացուցակում հաշվառված է եղել 222 ընտանիք:

Հանձնաժողովը Ջրաշեն համայնքում հաշվառված ընտանիքների մասով ցուցակում մերժման մասին որոշում է կայացրել 2011 թվականի փետրվարի 13-ին ՀՀ Լոռու մարզի Կաթնաջուր համայնքում կայացված արտագնա նիստի թիվ 2 արձանագրությամբ և 2011 թվականի մայիսի 4-ին ՀՀ Լոռու մարզի Ջրաշեն համայնքում կայացված արտագնա նիստի թիվ 5 արձանագրությամբ:

Որոնցով 9 ընտանիք չի ընդգրկվել բնակարան ստանալու իրավունք ունեցող անձանց ցուցակում:



3—ընտանիք երկրաշարժի հետևանքով բնակելի տունը քանդված կամ քանդման ենթակա չլինելու հիմքով
1—ընտանիք սեփականության իրավունքով բնակարան ստանալու կամ նախորդ տարիներին բնակարանային պայմանների բարելավման իրենց իրավունքից օգտվելու հիմքով
1—ընտանիք բնակարանային պայմանները արհեստականորեն վատթարացնելու հիմքով
4—երկրաշարժի հետևանքով բնակելի տուն կորցնելու փաստը չհիմնավորելու հիմքով

Գյուղ Արևաշող

2008 թվականի դեկտեմբերի 15-ի դրությամբ ՀՀ Լոռու մարզի Արևաշող համայնքում աղետի հետևանքով անօթևան մնացած և բնակարան ստանալու իրավունք ունեցող անձանց հերթացուցակում հաշվառված է եղել 209 ընտանիք:

Հանձնաժողովը Արևաշող համայնքում հաշվառված ընտանիքների մասով ցուցակում մերժման մասին որոշում է կայացրել 2011 թվականի փետրվարի 13-ին ՀՀ Լոռու մարզի Կաթնաջուր համայնքում կայացված արտագնա նիստի թիվ 2 արձանագրությամբ և 2011 թվականի մայիսի 4-ին ՀՀ Լոռու մարզի Ջրաշեն համայնքում կայացված արտագնա նիստի թիվ 5 արձանագրությամբ:

Որոնցով 7 ընտանիք չի ընդգրկվել բնակարան ստանալու իրավունք ունեցող անձանց ցուցակում:



5—ընտանիք սեփականության իրավունքով բնակարան ստանալու կամ նախորդ տարիներին բնակարանային պայմանների բարելավման իրենց իրավունքից օգտվելու հիմքով

1—ընտանիք բնակարանային պայմանները արհեստականորեն վատթարացնելու հիմքով

1—ընտանիք երկրաշարժի հետևանքով բնակելի տուն կորցնելու փաստը չհիմնավորելու հիմքով

Գյուղ Սարամեջ

2008 թվականի դեկտեմբերի 15-ի դրությամբ ՀՀ Լոռու մարզի Սարամեջ համայնքում աղետի հետևանքով անօթևան մնացած և բնակարան ստանալու իրավունք ունեցող անձանց հրթացուցակում հաշվառված է եղել 82 ընտանիք:

Հանձնաժողովը Սարամեջ համայնքում հաշվառված ընտանիքների մասով ցուցակում մերժման մասին որոշում է կայացրել 2011 թվականի փետրվարի 13-ին ՀՀ Լոռու մարզի Կաթնաջուր համայնքում կայացված արտագնա նիստի թիվ 2 արձանագրությամբ և 2011 թվականի մայիսի 4-ին ՀՀ Լոռու մարզի Ջրաշեն համայնքում կայացված արտագնա նիստի թիվ 5 արձանագրությամբ:

Որոնցով 2 ընտանիք չի ընդգրկվել բնակարան ստանալու իրավունք ունեցող անձանց ցուցակում:



2—ընտանիք երկրաշարժի հետևանքով բնակելի տունը քանդված կամ քանդման ենթակա չլինելու հիմքով

Այս քաղաքացիների գործերի ուսումնասիրության արդյունքում կազմակերպության կողմից առանձնացվել են այն քաղաքացիների գործերը, որոնք, ըստ մեզ, հակասում են ՀՀ կառավարության 10.06.1999թ. թիվ 432 և 13.11.2008թ. թիվ 1337-Ն որոշումների պահանջներին և դրանցով խախտվել են քաղաքացիների Սահմանադրությամբ երաշխավորված իրավունքները:

1-ին հիմքով առանձնացված խախտումը վերաբերում էր բնակարանային պայմանների բարելավման հիմքով բնակարան ստանալու իրավունք ունեցող անձանց ցուցակում չընդգրկելու վերաբերյալ որոշումներին:

Այստեղ խնդիրը կայանում է նրանում, որ Հանձնաժողովը ընտանիքի կազմում հայտնաբերում էր ընտանիքի մեկ անդամի անվամբ գրանցված բնակարան կամ բնակելի տուն, դրանով համարում է, որ ընտանիքի բնակարանային պայմանները բարելավվել են՝ հաշվի չառնելով այն հանգամանքը, որ հայտնաբերված բնակելի տունը սեփականության իրավունքով պատկանում է միայն ընտանիքի մեկ անդամին, իսկ ընտանիքի մյուս անդամները հայտնաբերված բնակարանի կամ բնակելի տան նկատմամբ որևէ իրավունքներ չունեն: Այս դեպքում Հանձնաժողովը պետք է կիրառեր ՀՀ կառավարության 10.06.1999թ. թիվ 432 որոշման 1-ին կետով հաստատված կարգի 11-րդ կետը, որով սահմանվում էր, որ եթե հաշվառված քաղաքացին կորցնում է հաշվառման մեջ գտնվելու իրավունքը, ապա նրա հետ հաշվառված նրա ընտանիքի անդամները պահպանում են իրենց իրավունքները:
Սակայն ուսումնասիրության արդյունքները ցույց տվեցին, որ հանձնաժողովը չի պահպանում վերը շարադրված դրույթը և բնակարան ստանալու իրավունքից զրկում է քաղաքացուն՝ հաշվի չառնելով, որ նրա բնակարանային պայմանները բարելավված չեն:
2-րդ հիմքով առանձնացված գործերում առկա է հետևյալ, մեր կարծիքով, թույլ տրված խախտումը.

Հանձնաժողովը ի թիվս այլի մերժման հիմք է սահմանել բնակարանային պայմանները արհեստականորեն վատթարանցնելը, որը ՀՀ կառավարության 10.06.1999թ. թիվ 432 որոշման մեջ մերժման հիմքերում սահմանված չէ, նման դրույթ առկա է ՀՀ կառավարության 13.11.2008թ. թիվ 1337-Ն որոշման մեջ, որ շատ գործերի փաստական հանգամանքներից ելնելով չէր կարող կիրառվել, քանի որ այն ունի անձի իրավական վիճակը խստացնող բնույթ, իսկ նման նորմը հետադարձ ուժով չի կարող տարածվել մինչև նորմի ընդունումը ծագած իրավահարաբերության վրա:

Խնդիրների մանրամասն նկարագրությունը տես <<Դատական գործեր>> բաժնում:

2.2.Ընտրված գործեր.

Հանձնաժողովի կողմից կայացված մերժման մասին որոշումների ուսումնասիրությունների հիման վրա կազմակերպության կողմից առանձնացվեցին այն ընտանիքների մասով կայացված որոշումները, որը մեր կարծիքով իրավաչափ չէր և կարելի էր վիճարկել դատարանում:

Հաշվի առնելով կազմակերպության ռեսուրսները և այն հանգամանքը, որ կազմակերպությունն արդեն իսկ ուներ ընտրված գործեր, որոնք գտնվում են ՀՀ

վարչական դատարանում, ընտրվեցին միայն այնպիսի գործեր, որոնք կունենային ռազմավարական նշանակություն և որոնց ոչ իրավաչափ լինելը, ըստ մեզ, ակնհայտ էր:

Այդպիսով Սպիտակ քաղաքի մասով կայացված որոշումներից առանձնացվեցին թվով 14-ը, այս թվի մեջ չէր մտնում այն ընտանիքների գործերը, որոնցով կազմակերպությունն արդեն զբաղվում էր:

14 ընտանիքների ուղարկվեց նամակներ, որին կից ներկայացված էր իրենց ընտանիքին վերաբերող որոշման վերաբերյալ կազմակերպության իրավաբանի կողմից տրված հիմնավորումները և եզրակացությունը (նամակի և կցված հիմնավորման օրինակը տես հավելված N6-ում):

Գյուղական համայնքներին վերաբերող մասով կայացված որոշումներից առանձնացվեց 4 ընտանիքի գործեր:

Առանձնացված գործերից 5-ը գտնվում է բողոքարկման փուլում, մյուսները չեն ներկայացել գրասենյակ, ոմանք էլ հրաժարվեցին իրենց գործը բողոքարկել՝ պատճառաբանելով, որ իրենք հոգնել են քաշքշուկներից և դատական գործընթացից:

Գլուխ 3

Բանավոր խորհրդատվություն: Իրավական աջակցություն:

3.1. Բանավոր խորհրդատվություն

Ծրագրի շրջանակներում նախատեսված էր նաև անվճար իրավաբանական խորհրդատվություն տրամադրել այն քաղաքացիներին, ովքեր աղետի գոտու վերականգնման ծրագրի շրջանակներում հանդիպել էին խնդիրների և անհրաժեշտ էր ցուցաբերել իրավաբանական խորհրդատվություն:

Ծրագրի ողջ ընթացքում իրավաբանական խորհրդատվություն ստանալու համար կազմակերպությանն է դիմել թվով 33 քաղաքացի: Որոնց խնդիրները կապված էր հերթացուցակում հաշվառման վերցնելու, քաղաքացիներից փաստաթղթեր պահանջելու օրինական հիմքերը պարզբանելու, բնակարանի սենյակների թվին և իրենց գործերի ընթացքի վերաբերյալ հարցումներ ուղարկելուն:

3.2.Իրավական աջակցություն

Ներկա փուլում կազմակերպությունն անվճար իրավական աջակցություն է ցուցաբերում թվով 21 ընտանիքի: Որոնցից 10-ը գտնվում է ՀՀ վարչական դատարանում՝ դատաքննության փուլում, 11 ընտանիքի գործ գտնվում է նախապատրաստական շրջանում, որոնք կներկայացվեն ՀՀ վարչական դատարան՝ վարչական կարգով բողոքարկելուց հետո:

Բոլոր դատական գործերով կազմակերպության իրավաբանը հանդես է գալիս որպես հայցվորի ներկայացուցիչ:

Գործերի նկարագրությունը

Զեկույցում ներկայացված են այն դատական գործերը, որոնք
դատական գործերի արդյունքները և ընթացքը ներկայացված է 2011 թվականի օգոստոսի 31-ի դրությամբ:

Այս գործերի ընթացքի վերաբերյալ տեղեկություններ կարող եք ստանալ՝ զանգահարելով 099-39-61-70, 093-13-83-36 հեռախոսահամարներով, կազմակերպության գրասենյակ այցելելով կամ <<Դատական տեղեկատվական համակարգ>> մուտք գործելով (www.datalex.am):

Գործ 1.Վարչական Գործ թիվ ՎԴ/4417/05/10.

Գործը գտնվում է ՀՀ վարչական դատարանում (հասցե՝Երևան,Գարեգին Նժդեհի 23).

Քաղաքացի Լ.Ա-ի ընտանիքը՝ 4 անձով. Կինը և 2 երեխաները 1988թ-ի դեկտեմբերի 7-ի Սպիտակի երկրաշարժի հետևանքով կորցրել են երկու սենյականոց բնակարան, ինչի հետևանքով 01.11.2008թ-ից ընդգրկված են ՀՀ Լոռու մարզի Սպիտակ քաղաքի աղետի

հետևանքով բնակարան կորցրած անօթևան և բնակարանի կարիքավոր ընտանիքների արտահերթ բնակարան ստանալու իրավունք ունեցող անձանց ցուցակում, երկու սենյականոց բնակարան ստանալու համար: 2010թ. հոկտեմբերի 5-ին Սպիտակ քաղաքում Հանձնաժողովի կողմից կայացված արտագնա նիստում կազմվել է արձանագրություն, որով որոշվել է՝ Լ. Ա-ի ընտանիքին չընդգրկել բնակարան ստանալու իրավունք ունեցող անձանց ցուցակում, այն հիմքով, որ քանդված հասցեի վարձակալ հանդիսացող Լ. Ա-ի անվամբ Սպիտակի քաղաքապետի 05.04.2005թ. թիվ 53 որոշման հիման վրա 05.04.2005թ. գրանցվել է սեփականության իրավունք, ք. Սպիտակում գտնվող բնակելի տան նկատմամբ: Հանձնաժողովը, ըստ էության, ճանաչել և հաստատված է համարել այն հանգամանքը, որ Լ.Ա-ի ընտանիքը մինչ երկրաշարժը ունեցել է բնակարան, որը երկրաշարժի ժամանակ քանդվել է: Հանձնաժողովը բնակարան չտրամադրելու որոշման մեջ որպես իրավական հիմք նշել է նախորդ տարիներին բնակարանային պայմանների բարելավումը:

Հանձնաժողովը հաշվի չի առել այն հանգամանքը, որ բնակարանով **ապահովված է միայն Լ. Ա-ը, իսկ նրա ընտանիքի մյուս անդամները սեփականության կամ օգտագործման իրավունքով բնակարան կամ բնակտարածք չունեն:**

Մինչդեռ նշված հարաբերությունները կարգավորող ՀՀ կառավարության 10.06.1999թ. թիվ 432 որոշման 1-ի մասի 11-րդ կետով սահմանվում է, որ **եթե հաշվառման մեջ գտնվող քաղաքացին** մշտական բնակության է մեկնել այլ վայր, մահացել է կամ **այլ հիմքերով կորցրել** է հաշվառման մեջ մնալու իրավունքը, **ապա նրա հետ միասին հաշվառման վերցված նրա ընտանիքի անդամների համար պահպանվում է հաշվառման մեջ գտնվելու իրավունքը, եթե չեն վերացել տվյալ ընտանիքը բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցող համարվելու հիմքերը:**

Նշված 11-րդ կետի տրամաբանությամբ, ավելի քան պարզ է, որ Հանձնաժողովը յորաքանչյուր անգամ պետք է գնահատի ընտանիքի **անդամներից յուրաքանչյուրի** հաշավառման մեջ ընդգրկվելու՝ բնակարան ստանալու իրավունքը, ինչը չի կատարվել և փաստորեն Լ. Ա-ի բնակարան ունենալու պատճառով նրա ընտանիքի մյուս անդամներին չի ընդգրկել հերթացուցակում:

Այս գործով 2011թ-ին ՀՀ վարչական դատարանը հրապարակեց դատավճիռը: Որով մասնակի բավարավեց հայցապահանջը, այն է.

Դատարանը անվավեր ճանաչեց վիճարկվող որոշումը, դատավճռով հաստատեց, որ հանձնաժողովի կողմից կայացված որոշմամբ (վիճարկվող ակտով) խախտվել է հայցվորների բնակարան ստանալու իրավունքը:

ՀՀ վարչական դատարանը դատավճռով հայտնած դիրքորոշմամբ հաստատեց, որ վարձակալի ընտանիքի անդամները ունեն բնակարան ստանալու իրավունք և նրանք պետք է օգտվեն պետական ծրագրի շրջանակներում բնակարան ստանալու իրավունքից:

Հայցադիմումով դատարանից խնդրել էինք որոշումն անվավեր ճանաչելուց հետո պարտավորեցնել պատասխանողներին ընդունել բարենպաստ վարչական ակտ:

Դատարանը այս պահանջը մերժեց՝ պատճառաբանելով, որ

բնակելի տուն (բնակարան) հատկացնելը հանդիսանում է վարչական մարմնի հայեցողական լիազորությունը, իսկ դատարանը իր դատական ակտով չի կարող փոխարինել վարչական մարմնին և իրացնել վերջինիս հայեցողությունը:

<u>Սակայն դատարանը վճռով</u> նշեց, որ

հանձնաժողովը նոր վարչական ակտ ընդունելիս հիմք պետք է ընդունի վճռով արտահայտված դատարանի իրավական դիրքորոշումը:

<u>Գործ. 2. Վարչական գործ թիվ ՎԴ/4636/05/10</u>

Գործը գտնվում է ՀՀ վարչական դատարանում (հասցե՝ Երևան,Գարեգին Նժդեհի 23)

Ա.Ղ-ը մինչ Սպիտակի երկրաշարժը (1988թ դեկտեմբերի 7) բնակվել է Սպիտակ քաղաքի Ոփյան 6/9 հասցեում իր ծնողների հետ միասին, երկու սենյականոց բնակարանում: Երկրաշարժի հետևանքով նշված բնակարանը քանդվել է: Ա. Ղ-ի ընտանիքը 01.11.2008թ-ից ընդգրկված է եղել ՀՀ Լոռու մարզի Սպիտակ քաղաքի աղետի հետևանքով բնակարան կորցրած անօթևան և բնակարանի կարիքավոր ընտանիքների արտահերթ բնակարան ստանալու իրավունք ունեցող անձանց ցուցակում, երկու սենյականոց բնակարան ստանալու համար: 2010թ. հոկտեմբերի 5-ին Սպիտակ քաղաքում Հանձնաժողովի կողմից կայացված արտագնա նիստում կազմվել է թիվ 20 արձանագրությունը, որով որոշվել է Ա. Ղ-ի ընտանիքին չընդգրկել բնակարան ստանալու իրավունք ունեցող անձանց ցուցակում, ***<u>այն հիմքով, որ Ա. Ղ-ի մոր անվամբ</u>*** գրանցվել է սեփականության իրավունք 3 սենյականոց բնակելի տան նկատմամբ:
Այս գործում Հանձնաժողովը հաշվի չի առել, որ նշված բնակարանը պատկանում է միայն Ա. Ղ-ի մորը: Ցույց չտալով որևէ իրավական հիմք՝ ցուցակում չի ընդգրկել Ա.Ղ-ի ընտանիքին:

Այս գործով հայցադիմումի ընդունումը մերժվել էր ՀՀ վարչական դատարանի կողմից: Դատարանի որոշումը բողոքարկվել է ՀՀ վարչական վերաքննիչ դատարան: Վարչական վերաքննիչ դատարանը մերժեց բողոքը՝ պատճառաբանելով, որ Հանձնաժողովի կողմից կայացված որոշումը վարչական ակտ չէ, ուստի այն չի կարող քննվել ՀՀ վարչական դատարանում:

Վարչական վերաքննիչ դատարանի դեմ ներկայացվեց Վճռաբեկ բողոք

Վճռաբեկ դատարանը բավարարեց վճռաբեկ բողոքը՝ վերացրեց ՀՀ վարչական դատարանի հայցադիմումի ընդունումը մերժելու մասին որոշումը: ՀՀ վարչական դատարանը՝ հիմք ընդունելով ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից հայտնած դիրքորոշումը կայացրեց որոշում՝ հայցադիմումը վարույթ ընդունելու մասին: Գործի քննությունը շարունակվում է:

Նախնական դատական նիստ է նշանակված 2011 թվականի հոկտեմբերի 14-ին:

Գործ 3. Վարչական գործ թիվ ՎԴ/2815/05/11.

Թ. Բ-ի ընտանիքը 4 անձով՝ ինքը, կինը, և երկու երեխաները, մինչև 1988թ. դեկտեմբերի 7-ի երկրաշարժը բնակվել են Սպիտակ քաղաքի Մուրացան թիվ 4 շենքի N1 երկու սենյականոց բնակարանում: Երկրաշարժի հետևանքով նշված բնակարանը քանդվել է: Ինչի հետևանքով նրանց ընտանիքը հաշվառված է ՀՀ Լոռու մարզի Սպիտակ քաղաքի աղետի հետևանքով բնակարան կորցրած անօթևան և բնակարանի կարիքավոր ընտանիքների արտահերթ բնակարան ստանալու իրավունք ունեցող անձանց ցուցակում՝ երկու սենյականոց բնակարան ստանալու համար:

05.10.2010թ. Սպիտակ քաղաքում ՀՀ աղետի գոտու բնակավայրերում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային խնդիրների լուծման նպատակով պետական աջակցությամբ իրականացվող բնակարանային շինարարության ծրագրերի շրջանակներում կառուցված բնակելի տների (բնակարանների) հատկացման հարցերով հանձնաժողովի կողմից կազմվել է թիվ 20 արձանագրությունը, որով որոշվել է Թ.Բ-ի ընտանիքին չընդգրկել բնակարան ստացող անձանց ցուցակում ***այն հիմքով***, որ ***Թ. Բ-ի անվամբ*** Սպիտակի քաղաքապետի 26.05.2005թ. թիվ 84 որոշման հիման վրա 26.05.2005թ. ***գրանցվել է սեփականության իրավունք*** ք. Սպիտակ, Մուրացան փողոցում գտնվող փայտաշեն (երեսպատված տուֆ քարով) ***բնակելի տան նկատմամբ***: Որպես ***իրավական հիմնավորում նշվել է*** նախորդ տարիներին ***բնակարանային պայմանների բարելավում:***

Մինչդեռ Հանձնաժողովը ***հաշվի չի առել այն հանգամանքը***, որ բնակարանով **ապահովված է միայն Թ.Բ-ը**, իսկ նրա ընտանիքի մյուս անդամների անվամբ սեփականության կամ օգտագործման **իրավունքով բնակարան կամ բնակտարածք գրանցված չէ և գոյություն չունի:** ***Այսինքն նրանց բնակարանային պայմանները չեն բարելավել:***

Այս գործով նախնական դատական նիստ է նշանակված 2011 թվականի հոկտեմբերի 20-ին:

Գործ 4. Վարչական գործ թիվ ՎԴ/4115/05/11.

Գործը գտնվում է ՀՀ վարչական դատարանում

2010 թվականի հոկտեմբերի 5-ին Հանձնաժողովը կայացրել է որոշում՝ Ա. Բ-ի ընտանիքին չընդգրկել 2010թ. պետական բյուջեով նախատեսված հատկացումների հաշվին իրականացվող բնակարանային շինարարության ծրագրի շրջանակներում Սպիտակ քաղաքի <<Վարպետաց>> թաղամասում կառուցված բնակելի տներից տուն ստացողների ցուցակում՝ բնակարանային պայմանների բարելավման հիմքով:

Որոշումը Հանձնաժողովը պատճառաբանել է հետևյալ կերպ.

1. <<Երկրաշարժի պահին ընտանիքի անդամ հանդիսացող տղան USAID-ի աջակցությամբ իրականացված ԲԳՎ ծրագրի շրջանակներում 20.11.2003թ. տրամադրված ՆՍՊ 125 վկայագրի միջոցով 2004թ. ձեռք է բերել Թորոսյան փողոցի թիվ 26 շենքի N16 3-սենյականոց բնակարանը:
2. Երկրաշարժի պահին ընտանիքի անդամ հանդիսացող մյուս տղայի և Սպիտակի քաղաքապետարանի միջև կնքված պայմանագրի համաձայն ……. Տղայի ընտանիքը ստացել է Կենտրոն-1 թիվ 14 շենքի N9 2 սենյականոց բնակարան>>:

Հանձնաժողովը ելնելով վերոգրյալ պատճառաբանությամբ և կիրառելով ՀՀ կառավարության 10.06.1999թ. թիվ 432 որոշման 1-ին կետով հաստատված կարգի 12-րդ կետը՝ գտել է, որ Ա.Բ-ի ընտանիքի բնակարանային պայմանները բարելավված են, ուստի նրանք պետք է զրկվեն բնակելի տուն ստանալու իրենց իրավունքից:
Այս գործով հանձնաժողովը որոշում է կայացրել բնակարանային պայմանների բարելավման պատճառաբանությամբ, մինչդեռ այս ընտանիքը որևէ բնակելի տարածություն չունի: Իսկ նման պայմաններում համարել, որ ընտանիքի բնակարանային պայմանները բարելավված են հնարավոր չէ: Իսկ Ա.Բ-ի երկու տղաների բնակարանները նրանք ստացել են Սպիտակի քաղաքապետի հետ կնքված պայմանագրերի շրջանակներում, ընդ որում այլ հասցեի դիմաց:

Այս գործով դեռևս դատական նիստ չի նշանակվել:

Գործ 5. Վարչական գործ թիվ ՎԴ6/0054/05/11
Գործ 6.Վարչական գործ թիվ ՎԴ6/0055/05/11
Գործ 7.Վարչական գործ թիվ ՎԴ6/0056/05/11
Գործ 8.Վարչական գործ թիվ ՎԴ6/0061/05/11
Գործ 9.Վարչական գործ թիվ ՎԴ6/0062/05/11
Գործ 10.Վարչական գործ թիվ ՎԴ6/0084/05/11

Նշված գործերի փաստական հանգամանքները նույն են, ուստի հաշվետու զեկույցում ներկայացվում է միասին:

Գործը գտնվում է ՀՀ վարչական դատարանում (Հասցե՝ ք. Վանաձոր, Մխիթար Գոշ 6)

Քաղաքացիները երկրաշարժից հետո կառուցել են ինքնակամ կառույցներ, որոնք, ըստ փորձագետի, ՀՀ-ում գործող իրավական ակտերի համաձայն <<Բնակելի տուն>> համարվել չեն կարող և համապատասխանում է ոչ հիմնական շինություն հասկացությանը՝ ժամանակավոր կացարաններ են: Սակայն բոլոր դեպքերում նշված կացարանները կադաստրի կողմից ստացել են պետական գրանցում որպես բնակելի տուն, որի արդյունքում քաղաքացիները զրկվել են բնակարան ստանալու իրավունքից:
Մեր կողմից դատարանին են ներկայացվել հիմանվորումներ այն մասին, որ բնակելի տները ստացել են պետական գրանցում օրենքների խախտմամբ, մասնավորապես չեն պահպանվել ինքնակամ կառույցների օրինականացման մասին ՀՀ օրենսդրության պահանջները և դրանք հանդիսանալով ոչ հիմնական շինություն չէին կարող ստանալ պետական գրանցում:
Նշված գործերով դատարանից խնդրել ենք վերացնել սեփականության իրավունքի պետական գրանցումը, այն դեպքերում, որտեղ առկա է քաղաքապետի որոշում, խնդրել ենք նաև վերացնել նշված որոշումները: Գործերի քննությունը դեռևս շարունակվում է:

Նախապատրաստվող դատական գործեր.

Ներկա պահին թվով 11 գործ գտնվում է նախապատրաստական փուլում, որոնք կներկայացվեն ՀՀ վարչական դատարան՝ վարչական կարգով բողոքարկելուց և մերժվելուց հետո:
Այդ գործերի փաստական հանգամանքները նույնական են 1-ից 4-րդ դատական գործերի հետ:

Գլուխ 4

Եզրակացություն

- *Աղետի գոտու վերականգնման ծրագրի շրջանակներում բնակարան ստանալու հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմատիվ ակտերում առկա են հակասություններ, ինչպես նաև այնպիսի ձևակերպումները, որոնք թույլ են տալիս նույն կետը մեկնաբանել տարբեր կերպ և յուրովի:*
- *Իրավակիրառ պրակտիկան ցույց է տալիս, որ բնակարանների բաշխման հարցերով հանձնաժողովը բնակարան ստանալու սուբյեկտ է դիտարկում միայն երկրաշարժի հետևանքով քանդված բնակարանի վարձակալ հանդիսացող քաղաքացուն և քաղաքացու բնակարանային պայմանների բարելավման հիմքերի բացակայության դեպքում բնակարան ստանալու իրավունքնից զրկում է նաև նրա ընտանիքի անդամներին, չնայած այն հանգամանքին, որ ՀՀ կառավարության որոշմամբ հստակ սահմանվում է, որ նման դեպքերում ընտանիքի անդամները պետք է պահպանեն իրենց իրավունքները: Այս խնդրի վերաբերյալ ՀՀ վարչական դատարանը հաստատեց, որ նման պայմաններում խախտվում են ընտանիքի անդամների բնակարան ստանալու իրավունքը (Տես՝ թիվ 1 գործում, վարչական գործ ՎԴ/4417/05/10):*
- *Հանձնաժողովը որոշում է կայացնում այնպիսի հիմքով, որը սահմանված չէ որևէ կիրառելի նորմատիվ ակտով:*
- *Քիչ չեն այն դեպքերը, երբ հանձնաժողովը ուղղակի կասկածի տակ է վերցնում համայնքի ղեկավարի կողմից կայացված որոշումները կամ գործողությունները՝ համարելով դրանք ոչ իրավաչափ: Նման դեպքում խախտելով հենց տեղական ինքնակառավարման մարմնի իրավունքները, քանի որ որևէ անձ իրավունք չունի կասկածի տակ դնել պետական և (կամ) տեղական ինքնակառավարման մարմնի գործողությունների իրավաչափությունը՝ քանի դեռ այն չի վիճարկվել օրենքով սահմանված կարգով և չի ճանաչվել անվավեր:*

Հավելվածներ

Հավելված N1

«Սպիտակի Հելսինկյան խումբ» իրավապաշտպան ՀԿ
Spitak Helsinki Group human rights non governmental organization

Հասցե . ՀՀ Լոռու մարզ, ք.Սպիտակ, Ալեք Մանուկյան 7ա2 Էլ փոստ. spitakixumb@yahoo.com

09 06 2011թ. N- ԱՄ-1/09/06

ՀՀ քաղաքաշինության նախարար և ՀՀ աղետի գոտու
բնակավայրերում երկրաշարժի հետևանքով անօթևան
մնացած ընտանիքների բնակարանային խնդիրների
լուծման նպատակով պետական աջակցությամբ
իրականացվող բնակարանային շինարարության ծրագրերի
շրջանակներում կառուցված բնակելի տների
(բնակարանների) հատկացման հարցերով հանձնաժողովի
նախագահ
պարոն Վարդան Վարդանյանին

Հարգելի պարոն Նախարար

Ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 27, 27.1, <<Տեղեկատվության ազատության մասին>> ՀՀ օրենքով՝

Խնդրում եմ տրամադրել 2010թ. հոկտեմբեր ամսից մինչ օրս ՀՀ աղետի գոտու բնակավայրերում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային խնդիրների լուծման նպատակով պետական աջակցությամբ իրականացվող բնակարանային շինարարության ծրագրերի շրջանակներում կառուցված բնակելի տների (բնակարանների) հատկացման հարցերով հանձնաժողովի (այսուհետ նաև Հանձնաժողով) Լոռու մարզի բնակիչների մասով կայացված այն բոլոր որոշումների օրինակները, որոնցով որոշվել է նշված ընտանիքներին չընդգրկել աղետի գոտու վերականգնման պետական ծրագրերի շրջանակներում բնակարան (բնակելի տուն) ստանալու իրավունք ունեցող անձանց ցուցակում (ինչպիսին է, օրինակ, Հանձնաժողովի 05.10.2010թ. թիվ 20 արձանագրությամբ կայացված որոշումը):

Ձեզանից խնդրում եմ վերը նշված բոլոր որոշումները, բացի փաստաթղթային տարբերակներից, մեզ ուղարկել նաև էլեկտրոնային տարբերակը՝ հետևյալ էլ. հասցեով. spitakixumb@yahoo.com.

Հարգանքներով

Կազմակերպության նախագահ Աստղիկ Էհտիբարյան

Կատ. Ա. Հարությունյան.
093-13-83-36

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
МИНИСТЕРСТВО ГРАДОСТРОИТЕЛЬСТВА
ЗАМЕСТИТЕЛЬ МИНИСТРА

REPUBLIC OF ARMENIA
THE MINISTRY OF URBAN DEVELOPMENT
DEPUTY MINISTER

37510. ք.Երևան. Հանրապետության հր.
Կառավարության տուն 3
37510, г.Ереван,пл.Республики,
Дом Правительства 3
Government House 3, Republic Square,
Yerevan 375010
FAX (3742) 523200
www.mud.am
E-mail:info@mud.am

11.07.11թ. N 03/13.1/3259-11

Ձեր N ---------- առ ----------

<Սպիտակի Հելսինկյան խումբ>
իրավապաշտպան հասարակական
կազմակերպության նախագահ
տիկին Ա.Էհտիբարյանին

Հարգելի տիկին Էհտիբարյան

Ի պատասխան Ձեր 2011 թվականի հունիսի 9-ի N ԳԲ-1/09/06 գրության՝ կից ներկայացվում է 2010 թվականի հոկտեմբերի 1-ից մինչև 2011 թվականի հուլիսի 1-ը աղետի գոտու բնակավայրերում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային խնդիրների լուծման նպատակով պետական աջակցությամբ իրականացվող բնակարանային շինարարության ծրագրերի շրջանակներում կառուցված բնակելի տների (բնակարանների) հատկացման հարցերով հանձնաժողովի արձանագրություններից քաղվածքները՝ ՀՀ Լոռու մարզի բնակավայրերում պետական աջակցությամբ իրականացվող բնակարանային շինարարության ծրագրի շրջանակներում բնակելի տուն (բնակարան) ստացողների ցուցակում 166 ընտանիքները չընդգրկելու վերաբերյալ հանձնաժողովի կողմից ընդունված որոշումների վերաբերյալ:

Առդիր՝ 1 էլեկտրոնային կրիչ և 5 ֆայլ:

Ա.Հակոբյան

Ե.Աթայան
52-46-80

«Սպիտակի Հելսինկյան խումբ» իրավապաշտպան ՀԿ
Spitak Helsinki Group human rights non governmental organization

Հասցե . ՀՀ Լոռու մարզ, ք.Սպիտակ, Ալեք Մանուկյան 7ա2 Էլ փոստ. spitakixumb@yahoo.com

09 06 2011 թ. N- Q.Y-2/09/06

ՀՀ քաղաքաշինության նախարար և ՀՀ աղետի գոտու
բնակավայրերում երկրաշարժի հետևանքով անօթևան
մնացած ընտանիքների բնակարանային խնդիրների
լուծման նպատակով պետական աջակցությամբ
իրականացվող բնակարանային շինարարության ծրագրերի
շրջանակներում կառուցված բնակելի տների
(բնակարանների) հատկացման հարցերով հանձնաժողովի
նախագահ
պարոն Վարդան Վարդանյանին

Հարցում

Հարգելի պարոն նախարար

Ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 27, 27.1, <<Տեղեկատվության ազատության մասին>> ՀՀ օրենքի 6-րդ հոդվածներով՝
Խնդրում եմ պատասխանել հետևյալ հարցերին.

1) Սպիտակ քաղաքի <<Վարպետաց>> թաղամասում աղետի գոտու վերականգնման պետական ծրագրի շրջանակներում քանի՞ բնակելի տներ են կառուցվել (խնդրում եմ ներկայացնել ըստ սենյակների թվի առանձին-առանձին):
2) Կառուցված բնակելի տներից քանի՞սն են բաշխվել շահառուներին (խնդրում եմ ներկայացնել ըստ սենյակների թվի):
3) Չբաշխված բնակելի տները ինչպե՞ս և ու՞մ կողմից են տնօրինվում
4) Ե՞րբ և ու՞մ են բաշխվելու դեռևս չբաշխված բնակելի տները:

Հարգանքներով

Կազմակերպության նախագահ L.S. Աստղիկ Էհտիբարյան

Կատ. Ա. Հարությունյան.
093-13-83-36

Հավելված N4

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
МИНИСТЕРСТВО ГРАДОСТРОИТЕЛЬСТВА
ЗАМЕСТИТЕЛЬ МИНИСТРА

REPUBLIC OF ARMENIA
THE MINISTRY OF URBAN DEVELOPMENT
DEPUTY MINISTER

37510, ք.Երևան, Հանրապետության հր.
Կառավարության տուն 3
37510, г.Ереван,пл.Республики,
Дом Правительства 3
Government House 3, Republic Square,
Yerevan 375010
FAX (3742) 523200
www.mud.am
E-mail:info@mud.am

11.07.11 թ. N 03/13.1/3264-11

Ձեր N ---------- առ ----------

<Սպիտակի Հելսինկյան խումբ>
իրավապաշտպան հասարակական
կազմակերպության նախագահ
տիկին Ա.Էհտիբարյանին

Հարգելի տիկին Էհտիբարյան

Ի պատասխան Ձեր 2011 թվականի հունիսի 9-ի N ԳԲ-2/09/06 տեղեկատվություն ստանալու վերաբերյալ հարցմանը, հայտնում եմ.

1-ին հարցի վերաբերյալ

ՀՀ Լոռու մարզի Սպիտակ քաղաքում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային խնդիրների լուծման նպատակով պետական աջակցությամբ իրականացվող բնակարանային շինարարության ծրագրերի շրջանակներում 2010 թվականին ՀՀ Լոռու մարզի Սպիտակ քաղաքի <Վարպետաց> թաղամասում կառուցվել է 220 բնակելի տներ, որոնցից 110-ը՝ 2-սենյականոց, 110-ը՝ 3-սենյականոց:

2-րդ հարցի վերաբերյալ

Կառուցված 220 բնակելի տներից 2011 թվականի դրությամբ 167 բնակելի տները բաշխվել են Սպիտակի քաղաքապետի կողմից 2008 թվականի նոյեմբերի 1-ի դրությամբ հաստատված՝ քաղաքում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած, բնակարան արտահերթ ստանալու իրավունք ունեցող քաղաքացիների ցուցակում հաշվառված ընտանիքներին, որոնցից 95-ը՝ 2-սենյականոց, 72-ը՝ 3-սենյականոց:

3-րդ հարցի վերաբերյալ

Չբաշխված 53 բնակելի տները հանդիսանում են Հայաստանի Հանրապետության սեփականությունը և ներկայումս որևէ մեկի կողմից չեն տնօրինվում:

4-րդ հարցի վերաբերյալ

Չբաշխված 53 բնակելի տների բաշխման նպատակով ՀՀ կառավարության քննարկմանն է ներկայացվել ՀՀ կառավարության որոշման նախագիծ, որով առաջարկվել է.

-3-սենյականոց 4 բնակելի տների հատկացման և բաշխման իրավասությունը վերապահել ՀՀ պաշտպանության նախարարությանը՝ սահմանված կարգով Սպիտակ քաղաքում և հարակից գյուղերում հաշվառված՝ հաշմանդամ դարձած զինծառայողների (ազատամարտիկների) անօթևան ընտանիքների բնակարանային խնդիրների լուծման նպատակով.

-3-սենյականոց 3 բնակելի տները հատկացնել Սպիտակ քաղաքում մինչև երկրաշարժը ծնված, երկրաշարժի հետևանքով ծնողներին կորցրած, սակայն ՀՀ կառավարության 2003 թվականի հուլիսի 23-ի N 983-Ն որոշմամբ հաստատված կարգի համաձայն չհաշվառված անօթևան անձանց:

Բացի այդ, աղետի գոտու բնակավայրերում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային խնդիրների լուծման նպատակով պետական աջակցությամբ իրականացվող բնակարանային շինարարության ծրագրերի շրջանակներում կառուցված բնակելի տների (բնակարանների) հատկացման հարցերով հանձնաժողովի 2011 թվականի հուլիսի 1-ին Երևան քաղաքում կայացած նիստում իրենց փաթեթներն անհրաժեշտ փաստաթղթերով համալրած 11 ընտանիքներ (որոնցից 5-ը՝ 2-սենյականոց, 6-ը՝ 3-սենյականոց բնակելի տուն ստանալու հավակնող) ևս ընդգրկվել են Սպիտակ քաղաքի <Վարպետաց> թաղամասում կառուցված բնակելի տներից տուն ստացողների ցուցակում, և նշված ընտանիքներին բնակելի տները կբաշխվեն 2011 թվականի հուլիսի 15-ին Սպիտակ քաղաքում կայանալիք վիճակահանության արդյունքներով:

Մնացած 35 բնակելի տների բաշխման հարցի կարգավորման խնդրին հնարավոր կլինի անդրադառնալ Սպիտակի քաղաքապետի կողմից 2008 թվականի նոյեմբերի 1-ի դրությամբ հաստատված ցուցակում սահմանված կարգով հաշվառված՝ 2 և 3-սենյականոց բնակելի տուն ստանալու հավակնող, թերի փաստաթղթային փաթեթներ ունեցող ընտանիքների կողմից իրենց փաթեթներն անհրաժեշտ փաստաթղթերով համալրելու, ինչպես նաև բնակելի տուն ստացողների ցուցակում չընդգրկված ընտանիքների կողմից իրենց իրավունքները դատական կարգով վերականգնելու գործընթացների ավարտման արդյունքներով:

Ա.Հակոբյան

Ե.Աթայան
52-46-80

Հավելված N5

«Սպիտակի Հելսինկյան խումբ» իրավապաշտպան ՀԿ
Spitak Helsinki Group human rights non governmental organization

Հասցե . ՀՀ Լոռու մարզ, ք. Սպիտակ, Ալեք Մանուկյան 7ա2, Հեռ. 093-13-83-36, էլ փոստ. spitakixumb@yahoo.com

16 08 2011 թ. N- Դ.-1/16/08

ՀՀ քաղաքաշինության նախարար
պարոն Վարդան Վարդանյանին

Դիմում-ուղերձ

Հարգելի պարոն նախարար

առաջարկության ներկայացման համար հիմք է ընդունվել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 27.1, <<Քաղաքացիների առաջարկությունները, դիմումները և բողոքները քննարկելու կարգի մասին>> ՀՀ օրենքի 3-րդ հոդվածները:

Խնդիրը, որը կներկայացվի սույն դիմումում, վերաբերում է ՀՀ Կառավարության 13.11.2008թ. թիվ 1337-Ն որոշման 2-րդ մասի 22-րդ կետին, որով ՀՀ Կառավարությունը սահմանեց, որ բնակարանային պայմանների բարելավման իրավունք ունեցող քաղաքացիների ցուցակները ենթակա են հաստատման համայնքի ղեկավարի կողմից՝ **մինչև 2008 թվականի դեկտեմբերի 15-ը:**

Նշված կետի տրամաբանությամբ ստացվում է, որ համայնքի ղեկավարը դեկտեմբերի 15-ից **հետո հերթացուցակում որևէ փոփոխություն կատարելու իրավասություն չունի:** Սակայն այսօր հայտնվել են քաղաքացիներ, ովքեր սահմանված ձևի դիմում ներկայացրել են **մինչև 2008թ. դեկտեմբերի 15-ը,** ընդ ***որում նրանք հաշվառված են եղել հերթացուցակներում,*** սակայն ինչ-ինչ (օբյեկտիվ) պատճառներով չեն կարողացել համայնքի ղեկավարին ներկայացնել **որևէ անհրաժեշտ փաստաթուղթ** մինչև 2008թ. դեկտեմբերի 15-ը, ինչի արդյունքում նրանց ընտանիքը վերահաշվառման ժամանակ դուրս է մնացել հերթացուցակից: Իսկ երբ անհրաժեշտ փաստաթուղթը ներկայացնում են համայնքի ղեկավարին՝ պատասխանում է.

<<Դուք փաստաթուղթը պետք է ներկայացնեիք մինչև 2008թ. դեկտեմբերի 15-ը և քանի որ չեք ներկայացրել այդ ժամանակահատվածում, ուստի հնարավոր չէ Ձեր ընտանիքին հաշվառել հերթացուցակում>>:

Այստեղ խնդիրը կայանում է նրանում, որ համայնքի ղեկավարը ընդհանրապես **նոր որոշում կայացնելու իրավունք չունի:**

Մինչդեռ *2009թ. հուլիսի 23-ին* ՀՀ Կառավարության թիվ 845-Ն որոշմամբ կատարվեց մի շարք փոփոխություններ, որով վերը նշված 22-րդ կետը լրացվեց հետևյալ բովանդակությամբ.

«2008 թվականի *դեկտեմբերի 15-ից հետո դիմումներ չեն ընդունվում*, և այդ ժամկետում բնակարանային պայմանների բարելավման համար հաշվառվելու նպատակով՝ սահմանված կարգով դիմում չներկայացրած անձանց նկատմամբ աղետի գոտու գյուղական բնակավայրերում բնակելի տների հատկացման մասով պետական աջակցության ցուցաբերման պարտավորությունների կատարումը համարվում է դադարեցված:»……

Վերոգրյալ դրույթի մեկնաբանությամբ ստացվում է, որ այն քաղաքացիները, ովքեր համապատասխան դիմումը ներկայացրել են մինչև 2008թ. դեկտեմբերի 15-ը, ապա նրանց նկատմամբ *սահմանված վերջնաժամկետը կիրառելի չէ, այսինքն՝ դիմումը համարվում է վերջնաժամկետում նրանց հաշվառման իրավունքը հաստատող փաստաթուղթ:*

Իսկ 2009 թվականի նոյեմբերի 26-ի թիվ 1402-Ն որոշման 6-րդ կետի դ) ենթակետով կատարվեց հետևյալ փոփոխությունը.

«9.1. Սույն կարգի 6-րդ կետի 3-րդ ենթակետում նշված փաստաթղթերը ներկայացնելու անհնարինության դեպքում՝ բնակարանային պայմանների բարելավման իրավունք ունեցող ընտանիքների ցուցակում ընդգրկելու համար *համայնքի ղեկավարը հիմք է ընդունում տվյալ համայնքի ավագանու որոշումը*՝ 1988 թվականի դեկտեմբերի 7-ի դրությամբ ընտանիքի կազմը և բնակելի տուն ունենալու փաստը հաստատելու մասին:»….

Եթե ելնենք ՀՀ Կառավարության 26.11.2009թ. թիվ 1402-Ն որոշմամբ կատարված փոփոխության տրամաբանությունից, ապա կստացվի, որ այն քաղաքացիները, ովքեր մինչև 2008 թվականի դեկտեմբերի 15-ը չէին կարողացել ներկայացնել որևէ փաստաթուղթ, որը կապացուցեր *այն փաստը*, որ *նրանք մինչև երկրաշարժը ունեցել են բնակելի տուն*, ապա նրանք կարող են դիմել *համայնքի ավագանուն և հաստատել նշված փաստը*, իսկ հաստատված փաստը պետք է ներկայացվի համայնքի ղեկավարին՝ ցուցակում փոփոխություն կատարելու և քաղաքացու ընտանիքին հաշվառելու համար, սակայն համայնքի ղեկավարի *որոշում կայացնելու իրավասությունը վերացվել է*, նման որոշում համայնքի ղեկավարը կարող էր կայացնել *միայն մինչև 2008թ. դեկտեմբերի 15-ը:*

Իմ կարծիքով այստեղ առաջացել է տրամաբանական սխալ (հակասություն), քանի որ քաղաքացուն իրավունք է վերապահվում 2008թ. դեկտեմբերի 15-ից հետո ներկայացնել փաստաթուղթ, որով հիմնավորվում է, որ ինքը մինչ երկրաշարժը ունեցել է բնակելի տուն, սակայն հակառակ դրան համայնքի ղեկավարին *նոր որոշում կայացնելու իրավասություն չի վերապահվում:*

Մինչդեռ, եթե քաղաքացին դիմումը ներկայացրել է սահմանված ժամկետում, *սակայն որևէ օբյեկտիվ պատճառով չի կարողացել ներկայացնել որևէ անհրաժեշտ փաստաթուղթ* և այդ պատճառով ցուցակում չի հաշվառվել, ապա քաղաքացուն պետք է տրամադրվի հնարավորություն՝ փաստաթղթի ներկայացման դեպքում վերականգնելու նրա իրավունքը:

<<Իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 7-րդ կետով սահմանվում է, որ հավասար իրավաբանական ուժ ունեցող նորմատիվ իրավական ակտերի կամ նույն իրավական ակտի տարբեր մասերի միջև հակասության դեպքում պետական և տեղական ինքնակառավարման մարմինները ֆիզիկական ու իրավաբանական անձանց հետ

հարաբերություններում պետք է **կիրառեն ֆիզիկական և իրավաբանական անձանց համար նախընտրելի նորմատիվ իրավական ակտը կամ դրա մասը**:

Մինչդեռ այս սկզբունքը ևս գործնականում կիրառելն անհնարին է դառնում, քանի որ կիրառող մարմնի (համայնքի ղեկավարի) իրավասությունները և լիազորությունները ավարտված են:

Գտնում եմ, որ դրական փոփոխությունից հետո պետք է սահմանվեր հստակ մեխանիզմներ՝ այդ փոփոխությունը գործնականում կիրառելի դարձնելու համար, այսինքն համայնքի ղեկավարին պետք է տրվեր իրավասություն՝ նոր ներկայացված փաստաթղթերի հիման վրա հերթացուցակում փոփոխություններ կատարելու:

Դա բխում է ժողովրդավարական և իրավական պետության սկզբունքներից, իսկ ներկայացված խնդիրը խոչընդոտում է քաղաքացու իրավունքների լիարժեք իրականացումը:

Ելնելով վերոգրյալից և նկատի ունենալով Ձեր իրավասություններն ու լիազորությունները՝ խնդրում եմ

- *փոփոխություն կատարելու առաջարկությամբ դիմել ՀՀ կառավարությանը, որով կվերացվի ՀՀ կառավարության 13.11.2008թ. թիվ 1337 որոշման 2-րդ մասի 22-րդ կետի հետևյալ նախադասությունը.*

<<Բնակարանային պայմանների բարելավման իրավունք ունեցող քաղաքացիների ցուցակները ենթակա են հաստատման համայնքի ղեկավարի կողմից՝ մինչև 2008 թվականի դեկտեմբերի 15-ը>>

- *Կամ կստեղծվեն անհրաժեշտ մեխանիզմներ, որոնցով քաղաքացուն հնարավորություն կտրվի նոր (անհրաժեշտ) ներկայացված փաստաթղթի հիման վրա հերթացուցակում վերականգնվելու:*

Հարգանքներով

Կազմակերպության նախագահ Աստղիկ Էհտիբարյան

Կատարող Ա. Հարությունյան
093-13-83-36

Հավելված N6

«Սպիտակի Հելսինկյան խումբ» իրավապաշտպան ՀԿ
Spitak Helsinki Group human rights non governmental organization

Հասցե . ՀՀ Լոռու մարզ, ք.Սպիտակ, Ալեք Մանուկյան 7ա2 Էլ փոստ.
spitakixumb@yahoo.com

__ _____ _____թ. N- _____

Հարգելի քաղաքացի

Մեր կազմակերպությունն իրականացնում է «Իրավական աջակցություն աղետի հետևանքով անօթևան մնացած ընտանիքներին» ծրագիրը՝ Ա.Դ.Սախարովի անվան մարդու իրավունքների պաշտպանության հայկական կենտրոնի, «Քաղաքացիական հասարակության նախաձեռնություններ» ծրագրի շրջանակներում, ICCO և EED կազմակերպությունների ֆինանսական աջակցությամբ: Ծրագրի նպատակն է՝ աջակցել «Օրենքի խախտմամբ հերթացուցակից դուրս մնացած ընտանիքների իրավունքների վերականգնմանը»:

Մեր կազմակերպությունը ուսումնասիրել է բնակարանների բաշխման հարցերով Հանձնաժողովի կողմից 2010 թվականի հոկտեմբերի 5-ին թիվ 20 արձանագրությամբ Ձեր ընտանիքի մասով կայացված որոշումը, որով Ձեր ընտանիքը չի ընդգրկվել Սպիտակ քաղաքի «Վարպետաց» թաղամասում կառուցված բնակելի տներից տուն ստացողների ցուցակում:

Գտնում ենք, որ Ձեր ընտանիքը կարող է վիճարկել Հանձնաժողովի կողմից կայացված որոշումը:

Մեր կազմակերպությունն կարող է ***անվճար*** աջակցել Ձեզ:

Եթե Ձեզ հետաքրքրում է առաջարկությունը, ապա կարող եք այցելել մեր գրասենյակ ք. Սպիտակ, Ալեք Մանուկյան 7ա2 հասցեով (Mirax խանութի հարևանությամբ):

Ուշադրություն.

Եթե դուք արդեն դիմել եք որևէ այլ կազմակերպության, իրավաբանի, փաստաբանի կամ այլ անձի Ձեզ աջակցելու խնդրանքով և այդ անձը զբաղվում է Ձեր ընտանիքի խնդրով, ապա մեր կազմակերպությունը չի կարող զբաղվել Ձեր գործով:

Կից ներկայացվում է Ձեր ընտանիքի մասով կայացված որոշման ուսումնասիրության արդյունքների ամփոփումը (Ուշադրություն. Ներկայացված հիմնավորումը ընդամենը մեր կազմակերպության կարծիքն է, այն դեռ ենթակա է ապացուցման և վիճարկման դատարանում):

Հարգանքներով

Կազմակերպության նախագահ՝ Աստղիկ Էհտիբարյան

Կատ. Ա. Հարությունյան.
093-13-83-36

Քաղաքացի Ֆ[redacted] Ա[redacted]ի Ընտանիքին
*Հասցե՝*_____

<u>Մերժվել է բնակարանային պայմանների բարելավման հիմքով:</u>

hh	ցուցակի համարը	Անուն ազգանուն	Ծրագրում չընդգրկվելու պատճառները	<u>Մեր տեսակետը</u>
12.	365.	Ֆ[redacted] Ա[redacted] [redacted]	6 անձով (ինքը, կինը՝ Գ[redacted] Հ[redacted], տղան՝ Հ[redacted] Ա[redacted], հարսը և երկու թոռները) Հաշվառված են 3 սենյականոց բնակարան ստանալու համար: Հանձնաժողովը հայտնաբերել է, որ նրա տղայի՝ Ն[redacted] Ա[redacted] անվամբ առկա է սեփականության իրավունքով նրան պատկանող բնակարան: 2. Ա[redacted] Ֆ[redacted] մինչև 2000թ. հաշվառված է եղել Արևաշող համայնքում:	1.Հանձնաժողովը սխալ է կիրառել 432 որոշման 12-րդ կետի ա) ենթակետը, քանի որ Ֆ. Ա[redacted] և նրա ընտանիքի անդամների բնակարանային պայմանները բարելավված չեն: 2.Գտնում եմ, որ Հանձնաժողովը պետք է կիրառեր ՀՀ կառավարության 10.06.1999թ. թիվ 432 որոշման կարգի 11-րդ կետը, որով սահմանվում է, որ եթե քաղաքացին կորցնում է հաշվառման մեջ մնալու իր իրավունքը, ապա նրա ընտանիքի անդամները պահպանում են իրենց իրավունքները: Ուստի Ֆ.Ա[redacted] և նրա ընտանիքի մասով կայացված որոշումը կայացվել է օրենքի խախտմամբ: Նախկին ՀՀ բնակարանային օրենսգրքի 53-րդ հոդվածով սահմանվում էր, որ վարձակալի ընտանիքի անդամները ունեին նույն իրավունքները ինչ որ վարձակալը: Այս հիմքով Քաղաքացին կարող է վիճարկել Հանձնաժողովի կողմից կայացված որոշումը:

<u>Ուշադրություն.</u>

Դատարան Հայց ներկայացնելու ժամկետը 2 ամիս է: Նկատի ունենալով որ արդեն սպառված է երկամսյա ժամկետը.

Դուք կարող եք վարչական կարգով (Հանձնաժողովին կամ ՀՀ քաղաքաշինության նախարարին) բողոքարկել Հանձնաժողովի կողմից Ձեր մասով կայացված որոշումը՝ **<u>մեկ տարվա ընթացքում</u>**, (ժամկետը հաշվարկեք 05.10.2010թ-ինց) որով կվերականգնվի բաց թողնված ժամկետը:

Այն դեպքում երբ բողոքարկել եք վերադասության կարգով կամ հենց Հանձնաժողովին, ապա Դատարան հայց ներկայացնելու ժամկետը անհրաժեշտ է հաշվարկել բողոքը ***<u>ներկայացնելու օրվանից</u>*** (***<u>երեք ամիս</u>***): Բողոքը մերժվելու կամ 30 օրյա ժամկետում բողոքին չպատասխանելու դեպքում կարող եք հայց ներկայացնել ՀՀ վարչական դատարան՝ ընդդեմ Հանձնաժողովի և ՀՀ քաղաքաշինության նախարարության՝ ի դեմս Նախարարի:

Հայցադիմումով անհրաժեշտ է դատարանից խնդրել.

Հանձնաժողովի կողմից Ձեր մասով կայացված որոշումը վերացնել և պարտավորեցնել պատասխանողներին Ձեր մասով բարենպաստ որոշում կայացնելուն:

Կատ՝. Ա.Հարությունյան
093-13-83-36

Կազմակերպության պատմությունը

2008թ-ի ապրիլի մեկից Սպիտակ քաղաքում «Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի» Վանաձորի գրասենյակ հասարակական կազմակերպության կողմից հիմնադրվեց Սպիտակի ներկայացուցչությունը: 2010թ-ի մայիսին ներկայացուցչություն գրանցվեց որպես առանձին իրավաբանական անձ և ստացավ «Սպիտակի Հելսինկյան խումբ» իրավապաշտպան ՀԿ անվանումը: Կազմակերպության առաքելությունն է տեղական, տարածաշրջանային և հանրապետական մակարդակներում իրավապաշտպանական գործունեության հզորացումն է:

Կազմակերպության նպատակներն են՝

- Աջակցել ժողովրդավարական համակարգի ամրապնդմանը և քաղաքացիական հասարակության զարգացմանը
- Մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանությունը
- Իրավական գիտելիքների տարածումը
- Նպաստել հասարակության մեջ հանդուրժողության սկզբունքների ձևավորմանը
- Աջակցել քաղաքացիական նախաձեռնություններին, նպաստել տեղական ինքնակառավարման և պետական կառավարման մարմինների հետ քաղաքացիական երկխոսությունների մեխանիզմների ձևավորմանը և կատարելագործմանը
- Նպաստել օրենսդրության կատարելագործմանը
- Աջակցել դատաիրավական համակարգի զարգացմանը

Առաջադրված նպատակները մեր կազմակերպությունն իրականացնում է հանդիպումների, գիտաժողովների, այցելությունների, դասընթացների, հրապարակումների, մրցույթների, հետազոտությունների և թույլատրելի այլ նախաձեռնությունների ձևով:

Չնայած, որ մեր կազմակերպությունը բավականին երիտասարդ է, բայց արդեն կարողացել է մրցունակ ծրագիր ներկայացնել ֆինանսավորման համար: Ա.Դ Սախարովի անվան մարդու իրավունքների պաշտպանության հայկական կենտրոնի «Քաղաքացիական հասարակության նախաձեռնություններ» ծրագրի շրջանակներում ICCO և EED կազմակերպությունների ֆինանսական աջակցությամբ կազմակերպությունը իրականացրել է «Սպիտակ համայնքում բնակչության իրազեկվածության մակարդակի բարձրացում տեղական ինքնակառավարման մարմնի գործունեության վերաբերյալ» ծրագիրը: Ծրագիրն իրականացվել է 2010թ.-ի հունիս-օգոստոս ամիսներին:
Նույն ենթադրամաշնորհային կազմակերպության ֆինանսական աջակցությամբ 2011թ-ի հունիս-օգոստոս ամիսներին իրականացրել է «Իրավական աջակցություն աղետի հետևանքով անօթևան մնացած ընտանիքներին» ծրագիրը: